լեզուով։ Ահա մի գովելի հայասիրութիւն որ պատիւ է բերում պ. Պոպովին մեր հայ հասարակութեան առաջ։»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Անցեալ շաբաթներին Երասխ գետի պարսից ափերում դէպի արևմուտք, Աստապատի աւերակ ամրոցի դէմ առ դէմ գտնվող լճակից, ջուրը դուրս է գցել երկու դիակներ անյայտ մարդկանց։»

—

Նեհրամ Թուրքաբնակ գիւղում, Հին-Նախիջևանի գաւառում, մօտ օրերս ցորենի աղանձ անելիս, հրդեհ է պատահում։ Պատմում են թէ կալի մէջ մի ձի և մի եզ լծած են եղել կալը կալսելու։ Եզն արձակվել է լծից և վտանգից ազատվել, իսկ ձին կրակի մէջ բովուել է։

—

ՕՐԴՈՒԲԱԴԻՑ մեզ գրում են։ «Մի չեղած, սարսափելի երևոյթ մեր հայոց կեանքի մէջ պատահեց այս օրերս մեր Օրդուբադ քաղաքում։ Մի պատուաւոր, երիտասարդ հայ տիկին, Բ—եանց, որի մարդը հարուստ և յարգված է ամբողջ քաղաքում և նահանգում, օգոստոսի 2-ին Հանդամէջի մէջ անձնասպանութիւն է գործել բէվոլվէրից։ Անձնասպանութեան առիթը, ասում են նոյն է, ինչ որ Օստրովսկու «Гроза» պիէսայի հերոսուհի Կատերինայի, որ ստիպել էր Կատերինային իրան ջուրը նետել,— այն է անօրէն հալածանքներ սկեսուրից։ Զանազանութիւնն այն է միայն որ մեր հայ հերոսուհի զոհը, մինչև գերեզմանը հաւատարիմ է մնացել իր մարդուն, այն ինչ Օստրովսկու հերոսուհին, ինչպէս յայտնի է, հաւատարիմ չէր։»

—

Կ. Պոլսից ստացած մի մասնաւոր, պատահական նամակից, հետեւալ տեղեկութիւններ ենք քաղում Թիւրքիայի մայրաքաղաքին իշխան Ամատունու արած այցելութեան մասին։ «Իշխանը Պրընեսը փառաւոր հիւրանոց իջնելուն պէս, օրերով վարձում է մի գեղեցիկ կառք երկու ձիաւորներով (կօնվոյ), կրծքին կպցնում է փաստաբանական նշանը և սկսում է շրջել Կ. Պոլսի մէջ։ Տեղական լրագիրների էջերը իսկոյն լցվում են մանրամասնութիւններով իշխանի մասին. որտեղ ճաշեց իշխան Նապոլէօնը, ում այցելեց, երբ գնաց թատրոն, երբ տուն վերադարձաւ։ Կ. Պոլսի ինտելիգէնցիան վարվում է իշխանի հետ այն ձևով, ինչպէս նրա ծառաները Թիֆլիսում նրա հետ չեն վարվում։ Իշխանը վերցնում է մի օթեակ 12 ներկայացումների համար. դերասաններից մինին հաւանում է, միւսին ոչ, դերասանուհիներից մինին ծափահարում է, միւսին ոչ, իբր թէ բան է հասկանում թատրոնի գործում։ Տիկին Հրաչեային տեսել է Մարգարիտա Գոթիէի դերում։ Յետոյ նրա մօտ վիզիտով է գնացել։ Իշխանը, որ մի երկու տարի առաջ հայերէն մի խօսք չը գիտէր, և արհամարհում էր իր մայրենի լեզուն, հռչակվել է Կ. Պոլսում որպէս Թիֆլիսի ազգասէրներից մէկը, որպէս մի մարդ, որին ամբողջ Թիֆլիսը պարտական է թէ այժմ սկսում է հայերէն լեզուով խօսել։ Ներկայացել է պատրիարքին, այցելել է հայոց դպրոցները, այն ինչ յայտնի է որ նա հայերէն մի տող բան չէ կարդում և մի քանի տարի սրանից առաջ, երբ Թիֆլիսի թատրոնասէրները համարձակվում էին բերել Ամատունուն մի տոմսակ հայոց ներկայացման համար, նա արհամարհանքով այդ տոմսակը դարձնում էր և փող չէր վճարում։ Վերջապէս Հրաչեան հրաւիրվում է 300 բուբլ ամսական ռոճիկով։ Ասում են Սիրանոյշն էլ է գալիս։ Ուրեմն 1879 թւին հրաւիրված դերասանները 150 ր. էին ստանում, 1880 թւին 200 ր., իսկ այժմ 300 բուբլ ամսական։»

—

Ռուս լրագիրներ հաղորդում են, որ առաջիկայ ձմեռը Ս. Պետերբուրգի գեղարուեստական ակադեմիայում ներկայացրած կը լինեն այն բոլոր առարկաները, որոնք պէտք է յետոյ ներկայացրած լինեն ընդհանուր ռուսաց գեղարուեստական հանդիսին։ Պատկերների թւում ներկայացրած կը լինեն մեր երևելի նկարիչ Այվազովսկուչորս նոր պատկերներ։

—

«Тифлисскія Объявленія» լրագիրը հաղորդում է որ սեպտեմբերի 1-ից կը բացվեն Թիֆլիսում 7 հատ տարրական դպրոցներ, որոնց մէջ բոլոր առարկաները կը մատակարարվեն երեք լեզուով՝ հայերէն, վրացերէն և ռուսերէն լեզուով։

—

Ռուս լրագիրներում կարդում ենք որ այս օրերս մի քանի կանայք Ս. Պետերբուրգի մէջ խնդիրք են տուել մի արտէլ (ընկերակցութիւն) կազմելու, լրագիրները և գրքերը փողոցներում հատով ծախելու համար։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ այս օրերս հասան Թիֆլիս և դիտաւորութիւն ունեն մի կօնցէրտ տալ մեր քաղաքում Ս. Պետերբուրգի ռուս օպէրայի արտիստները՝ երգչուհի Մարիա Մակարովա, երգիչ պ. Վ. Մայբորոդա և պիանօի վրա ածող օրիորդ Ա. Մակարովա։ Արտիստները դիտաւորութիւն ունեն կատարել կըտորները Զայկովսկու օպէրաներից։

—

Զուլֆից հաղորդում են «Кавказъ» լրագրին որ պարսից կառավարութիւնը արգելել է Գիլանում և Մազանդարանում կտրել չինարի և ընկուզենու անտառները, որովհետև այդ տեղերում գրեթէ ոչնչացրած են արդէն մնացած անտառները։ Ռուս լրագիրը կարծում է որ պարսից կառավարութեան այդ կարգադրութիւնը ազդեցութիւն կունենայ և Անդրկովկասում չինարի փայտի գնի բարձրանալու վրա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

—

Հումբերտ Թագաւորը հրամայեց հարցնել աւստրիական կայսրից արդեօք նա գոհ կը մնայ իտալական Թագաւորի այցելութեամբ Իշլի մէջ։ Ֆրանց Յովսէփ պատասխանել է, որ նա միշտ և ամեն տեղ մեծ ուրախութեամբ կը հանդիպի իտալական Թագաւորին։

Հռոմի մէջ մի նշանաւոր ժողով կայացաւ, որի նպատակն էր բողոքել այն օրէնքների դէմ, որոնք ապահովում են պապական իշխանութիւնը։ Ժողովին մասնակցում էին Գարիբալդիի երկու որդիները, որոնք նոր էին վերադարձել Աւստրիայից։ Թէպէտ ժողովին 3,000 մարդիկ էին մասնակցում, բայց այնու ամենայնիւ վիճաբանութիւնները խաղաղ էին կատարվում։ Պոլիցիան թոյլ չը տուեց կարդալ ժողովի վճիռը այդ օրէնքները ոչնչացնելու մասին և առաջարկեց ներկայ եղողներին հեռանալ։ Ցիշեալ օրէնքների համեմատ իտալական կառավարութիւնը պարտաւոր է պաշտպանել պապական գահի ապահովութիւնը և անկախութիւնը և տարեկան մի նշանաւոր գումար տալ Վատիկանին։ Պապի կառավարութեանը թոյլ է տրված իր մօտ ունենալ օտար պետութիւնների ներկայացուցիչներ և առանձին փոստային և հեռագրական վարչութիւններ։ Նա հսկում է հոգևոր սեմինարիաների և այլ հիմնարկութիւնների վրա և եպիսկոպոսներ է նշանակում։

—

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս 3 օգոստոսի

Այս օրերս եկաւ այստեղ Թիֆլիսի թատրոնական խմբի կօրիֆէյներից մինը. Նորա գալստեան մասին իմացանք ի հարկէ տեղական լրագիրներից, որոնց խմբագիրները իրանց անձնական տեսակցութիւններից այնչափ մանրամասը տեղեկութիւններ իմացան Թիֆլիսցի «վսեմափայլ» հիւրի համար, որ մի քանի լրագիրների մէջ նա յայտնվեց սեփականատէր Ուրալի և Կովկասի բոլոր գլխաւոր հանքերի. այս հիման վրա լրագիրներից մինը prince-rentier-*ին նմանացրեց նաև հարուստ Մարքիզ Սալիսբրիին։ Այս ամենը դիցուք թէ ընտրած նպատակի համար շատ յարմար է և արդիւնաւոր, բայց ասեցէք խնդրեմ ռուսահայերի անուան և արժանապատուութեան տեսակէտից հապա ինչպէս է. չէ որ մի շարք անձերի այսպիսի արարքներից յետ, ռուսահայերի վրա ունեցած համարումը չարաչար կարող է վնասվիլ. այս օր կը գայ մին և նա կը սկսէ խօսել իր տաճկահայ եղբայրների հետ, ինչպէս բարձր շրջանների մէջ ամենամեծ ազդեցութիւն ունեցող և հայոց բաղտի միակ պաշտպան բարի հրեշտակ. վաղը կը գայ նորա հլու արբանեակներից մինը և կը սկսէ խօսել Ներսէս պատրիարքի հետ, ինչպէս լիազօր հաւատարմատար և ամենրինող ընդհանուր ռուսահայերի նուէրներին, իսկ երբ խեղճ պատրիարքը հաւատալով նորա խոստումներին շուտով հարիւր հազարներ իր ձեռամբ ուղարկելու վերաբերմամբ, կը սկսէ մի քանի հազար ղրուշի պարտք անել ազգային պէտքերի համար, մէկ էլ կերևայ որ մեր ռուսահայերի ընդհանուր հաւատարմատարը միայն թող փչելու համար է արել այդ ամեն խոստումները։ Վերջապէս կը գայ մի ակամայից ազգասէր դառած և հարստութեան ժամանակ միշտ ճշդիւ անաարբեր մնացածը ազգային գործերի մէջ, նա կը սկսէ նոյն օյինները խաղալ պատրիարքի և այստեղի ազգայիններին հետ։ Ասեցէք աղաչեմ, համոզվելով վերջ ի վերջոյ այս ամենքի խաբեբայութիւնից և բաղտախնդրական շարժուածքի մէջ, ինչ հասկացողութիւն կունենան վերջապէս մեզ վրա Կ. Պոլսի ազգայինները. չեն ունենայ արդեօք իրաւունք մեզ ասելու. «էհ, եթէ դուք մեզ ձեռնածու և բաղտախնդրական մարդիկ էք համարում «յանուն ազգասիրութեան»—դուք էլ հիմայ երեցաք մեզանից ոչ պակաս...» Ցիրաւի ցաւալի է, որ Կ. Պոլիս յաճաղող ռուսահայերը փոխանակ անկեղծ և պարզ յարաբերութեանց, փոխանակ իրանց դիտողութիւնները և ունեցած համոզմունքները ընդհանուր ազգային շարժման վերաբերմամբ յայտնելու, կը գան այստեղ միայն աչքին թող փչելու և զուարճանալու համար. ինչ մտաւոր համերաշխութիւն և գաղափարաց ներդաշնակութիւն կարող է հաստատվիլ երկու կողմի հայերի մէջ այսպիսի ընթացքով....*

Մի զարմանալի և խիստ տխուր կէտ, որ նշմարվում է այս կողմից հայերի մէջ այն է, որ կրթութիւնը բնաւ երբէք խորը չէ թափանցում հայի բնաւորութեան մէջ, այլ այդ հայը, լինի թէկուզ համալսարանական, թէկուզ մագիստրոս և մեծ պաշտօնեայ, դարձեալ իր անվայել սովորութեամբ և հակումներով նա կը մնայ նոյն ցուցամոլ, ինչպէս մի կինտօ. մինթէ այս են մեր յառաջադիմութեան և լուսաւորութեան չօշափելի արդիւնքները...

Այսպէս թէ այնպէս, բայց այս անգամ Ուրալի և Կովկասեան հանքերի սեփականատէր իշխանը կը բերէ իր հետ մի թանգակին հիւր Թիֆլիսի հասարակութեան, որ յիրաւի արժանի է ամենախորին յարգանաց և հիացման. դա ձեր բեմի նոր մեծ սիւրպրիզ տիկին Հրաչեայ է, ինչպէս լսեցի յարգելի հայ բեմագէտ տիկինը որոշել է համաձայնվիլ «վսեմափայլ» իշխանի թախանձագին աղաչանաց Թիֆլիսի մօդայամոլ հասարակութեան երեսը տեսնելու համար. բայց պէտք է այն էլ ասած, որ որչափ էլ Թիֆլիսի հասարակութիւնը մօդայամոլ ճաշակ ունենայ, դարձեալ այս անգամ կարող է վատահ լինել, որ տիկին Հրաչեայի մօդան երկար տարիներ չի անցնի ձեզ մօտ, եթէ ի հարկէ նորան զզուացրած չը փախցնէք այդտեղի զանազան թատրոնասէր տիրացու և բեցենզենտների չնորհիւ....

*Բայց ինչ է ամենից հետաքրքիրը մեր կողմերից Կ. Պոլսի հիւր եկող «վսեմափայլի» պատահածի հետ, այդ այստեղի խմբագիրների խաղացած խաղն է։ Դրանք հէնց որ իմացան թէ Ռուսաստանից մի «հարուստ» մարդ է եկել, իսկոյն իւրաքանչիւրը նոցանից կը վազէ նորա վեր եկած պանդոկը և ժամերով սպասելով նորա նախասենեակի մէջ, վերջապէս ներս կը մտնեն և երեսները պնդացրած ամբողջ ժամերով նստելով, վերջապէս կը սկսեն ակնարկել, որ ով իրանց լրագրին բաժանորդ գրվի, այդ լրագիրը նորա տրամադրութեան տակ է։ Այսպիսով պարզ ի պարզոյ դրամ են ուզում պոկել մի քանի մեծ մեծ և փարթամ խօսքեր ասելով նոր եկողի «մեծ ազգասիրութեան», «մեծ հարստութեան» «անուան» և այլն բաների վրա։ Եկող մարդիկ եթէ «վսեմափայլի» տեսակիցն են, ի հարկէ, մեծ ուրախութեամբ մի քանի տարուայ բաժանորդագինը կանխիկ կը վճարեն երեք չորս լրագրին (ի հարկէ ոչ նորան ստանալու և ոչ էլ կարդալու համար) և դորանից յետ էլ ազրծաւ. մէկ էլ տեսար լցվեցին այդ մուրացկանների թերթերը ամեն տեսակ չողոքորթութիւններով և սուտերով։ «Պուբլիցիստ» ասված այսպիսիներից մէկին երբ նկատեցի այն օրը թէ՝ ինչու նոր եկած «հարուստ» մարդիկների ուշադրութիւնը չեն դարձնում իրանց հիւանդանոցի թշուառ դրութեան վրա, ուր երկու հարիւր փոքրիկ որբերը ամբողջ ամիսների ընթացքում տաք կերակուրի երես չեն տեսել, «պուբլիցիստ» կոչվածը պատասխանեց առանց կարմրելու. «եթէ հիւանդանոցին տրվէին լիրաները, հապա ինձ ով կը տայ։» Եւ այսպիսով կը տեսնէք, որ Թիֆլիսից եկած «մեծապատիւ, և վսեմափայլ» «ազգասէր» հիւրերը հաղարներով վատնելով փառաւոր պանդոկների, թանդ կառքերի և կաֆէշանտանների մէջ, յետ կը դառնան տուն ոչ մի կոպէկ չը նուիրելով ազգային բարեգործական հաստատութիւններին. ասելով մտքի մէջ. «էհ, յիմարներն էլ ինձ ազգասէր և մեծ մարդ են կարծում. ինձ էլ այդ է հարկաւոր. էլ ինչ հիւանդանոց, ինչ միւանդանոց»։

Բայց խաբվելով մի քանի խմբագիրների չողոքորթութիւններից, իզուր են կարծում այդ ազգասէրները թէ իրանց արածները բանի տեղ անցան. ընդհակառակը՝ հէնց որ նոքա ոտները Կ. Պոլսից դուրս դրեցին, նոյն մուրացկան խմբագիրները կը սկսեն ծիծաղել միմեանց մէջ և ծաղրել ամեն տեղ եկողին։ Տեղն է նրանց։ Ահա այս են այստեղի ինտելիգէնցիայի ներկայացուցիչ պուբլիցիստները, էլ կարող էք ինքներդ դատել թէ ինչ կը լինեն մնացածները, որոնք գիտեն շատ փարթամ և ճռնչող ճառեր խօսել... Բոլոր այս ճառախօս և ազգին «անձնուիրաբար» ծառայող մարդիկ այսպէս են։ Միացեալ ընկերութեան նախկին անօրէն ժողովի մասին մի քանի խօսք։ Այդ «անձնուէր և հայրենասէր» անօրէն ժողովը այն մարդիկներից էր կազմված, որոնց վրա Յօսիւնը այդչափ արտասուքներ էր թափում նորա տապալելու մասին։ Հետաքրքիր է իմանալ՝ ինչ կասէ նա այժմ. երբ իր «անձնուէր» վարչութիւնը նստեց Միացեալ ընկերութեանը այդչափ հազար ռսկիներ «այլ և այլ» ասված անյայտ ծախքերի վրա։

Կ. Պոլսի հայ ինտելիգէնցիան այնչափ ընկած է բարոյապէս, որ մենք ոչ երբէք չենք կարող ճանաչել նոցա իբրև մեր միջնորդ Հայաստանի մէջ բարիք գործելու համար, վասնորոյ մի օր յառաջ մենք պիտի ձեռք քաշենք Կ. Պոլսի ինտելիգէնցիայից և մտենք անմիջական յարակցութեան նոցա հետ, որոնք գործում են նոյն իսկ հայրենիքի մէջ։ Այս կը լինի վերջին և հաստատ համոզմունքը իւրաքանչիւրի, ով անբաղտութիւն կունենայ փոքր ի շատէ հիմնաւոր կերպով ճանաչել Կ. Պոլսի բազմաթիւ կին և տղամարդ լուսատուներին....

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 25 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 75½ կ., չորրորդ 94 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 231 ր. 75 կ., երկրորդ 228 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 25½ կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 37 կ., ռսկի 7 ր. 76½ կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25,81 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ։ Բորսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ